

քրեակրից Աշահան անուամբ *) : Բոլոր այս օտար չաստուածներն հաւասարապէս պաշտուած էին Հայերից բայց ի Հրէաներից, որ ունէին առանձին կրօն և արարողութիւնք : Աւրիշ օտար գաղթականներն խառնվում էին զիւրութեամբ բնաշխարհիկներին հետ, սովորում էին նոցա վարքերն և հետեւում էին անորոշաբար նոցա քաղաքական—կրօնական սովորութեանց :

(Շարձակէն)

Ք. ՅՐ. ՍՕՅԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ Ա Ր Ա Կ Ո Յ Ս .

(Շարձակէն և վերջ)

Երբ 1850 ամին վեր անդր յիշեալ որդիս Լազարեանց... ճեմարանէն եկաւ Տիփսիս, և հրամանաւ հանգուցեալ ներսէս Սրբազան Հայրապետի կարգեցաւ մանկավարժ ներսիսեան Գպրոցի ստորին դաստասան, ուր ես յայնժամ վերատեսչի պաշտօնն ունէի, մտադիր ականջ զնկելով Տիփսիսի Հայոց քահանայից և իմ ընթերցուածոց առողանութեան, և մանաւանդ աշակերտեալ մանկանց ըստ գաւառաց գաւառաց արտասանութեան, յաւուր միում Ռափայէլ որդիս առարկութիւն արաւ այն զանազանութեան ազգաւ, որ գտանվում էր իմ և տեղական քահանայից և մանկանց հնչմանց մէջ . որովհետև՝ որպէս ես, նոյնպէս և Ա. Ե. Տափառ ներսէս, և Շահխաթունեան Յովհաննէս Կպիսկոպոսն, և Մինաս Եպիսկոպոսն, և ոմանք ի քահանայից՝ որք էին յարեւելից Հայաստանի, ըստ ամենայնի Արարատեան հնչիւնն ունէինք Բ. Գ. Դ. Ե. և Կ տառերի մէջ .

իսկ Տիփսիսեցի Հայ քահանայք և բոլոր Տիփսիսեցի աշակերտք և վարժապետք տեղական հնչիւնն էին գործ ածում, մինչ վիճակաւոր առաջնորդն Պարնեցի Արքեպիսկոպոսն Սրբազան Պարապետ քահանայք և վարդապետք, որ Հայոց աշխարհէն էին գաղթեալ, ըստ ամենայնի Օսմանցոց Հայերէն բարբառոյ հնչիւնն էին ի կիր առնում վերոգրեալ վեց տառից մէջ, հարցուց թէ՛ արդեօք որն եմ կարծում ուղիղ : Ես՝ որ վաղ էի այդ մտածել, դեռ ևս Աստրախան և Նոր—Նախիջևան քաղաքներումն վարժապետական պաշտօն վարելոյ ժամանակն, պատասխանեցի՝ թէ « Թէպէտ պարտաւոր ենք Արարատեան հնչիւնն նախընտիր համարել և պահել, որպէս և միշտ ի մանկութենէ պահել եմ՝ ինչ հօրիցս լսել եմ, բայց ճիշդ դատարնութիւնն ցոյց է տալիս, որ Տիփսիս առաւել մերձ լինելով Արարատայ, որ յաճախ էր մնում թշնամեաց հարուածոց ներքոյ, երբ Արարատ իւր երկարաակ գերութեանց մէջ մնալով՝ Պարսից մարզպանաց և Հագարացոց ոստիկանաց ժամանակներումն՝ իւր ընդհարմարոյ հնչիւնը հարկադրուել է կորուսանել զանազան չարաբաստիկ շրջադարձից բռնութենէն ճնշվելով, Տիփսիս՝ հաւատարիմ աւանդապահ է հանդիսացել նախնեաց զանձուն, և այս իսկ պատճառաւ՝ Տիփսիսի հնչիւնն պիտի համարուի աւելի մերձ այն հնչմանց՝ ինչ Մետրոպ տուել է իւրահար տառերուն, թէ Հայոց և թէ Արաց, և ինչ որ թարգմանիչք՝ մատենից թարգմանութեան ժամանակն տուել են իւրաքանչիւր տասից այն ընդհանր ձայնն՝ ինչ որ նորա ունէին թարգմանելի գրեանց տիրող ազգաց շրթանց մէջ :

Մովսիսի Խորենացոյ պատմագրութեան մէջ կրեւում է որ Հայերէն տառից հնչիւնն յարմարեցած է այն տառերի հնչմանց, որովք արտաբերվում են յատուկ անուանք այն լեզուի, յորմէ թարգմանուել են մեր մատենանք, և ըստ այնմ պիտի պահէին իւրեանց հնչումն անվճար, և այժմ տեսնում ե՛ք՝ որ Բաբելոն՝ ընդհանրապէս հնչում է Babilon. Բէկոզերուց՝ Հրէից բարունին հնչում է Beelzebub. Գողգոթա՝ Հրէից յարմարապրութեամբ հնչվում է Golgos. Գաւիթ՝ David, Ադամ՝ Adam կամ Adm, Աբել՝ Abel, Գան՝

(*) Մովսէս Խոր. Գիր Ա. ԳԼ. 11. 12. 13.

Dan, Գարրիէլ՝ Gabriel, Գեդեոն՝ Gedeon, Գրիգոր՝ Ըստ Յունաց արտաբերութեամբ է Gregorios, Գեորգ՝ Georg, Դելփոս՝ Delfos, դլփին՝ delfin, Էլն և Էն։ Ռափայէլն այս զաղափարն 1851 տարաւ իւր հետ ի Ս. Պ. Բուրգ և ի Գորպատ, և անդ իւր աշակերտակցաց և ընկերակցաց և հասակակցաց հաղորդեց անյողորդ համոզմամբ։

Ասուժեաւոր և հայրենասէր հայազգին Կ. Յ. Եղեանց, գուցէ իւր մտադիւր ուշադրութեամբ կամ Ռափայէլէն ընձիւղեալ աւանդութեամբ՝ իւր սեպհական առանձին վարժարանի մէջ՝ տեսայ որ ի քանի ամաց հետէ սկիզբն էր արել մէկ քանի տառից հնչիւնն ուղղել ըստ հնչմանց Տրփիսիայ, որ ինձ յոյժ հաւանական երեւցաւ, թէպէտ և իմ սովորական գործածութեան եղանակին էր և ցարդ ևս՝ է ըստ ամենայնի հակառակ, եւ յետոյ տեսայ՝ որ գիտնականն Գերորէ Պատկանեան, աւելի տեղեակ լինելով մեր լեզուի ծագման և արմատական կանոնաց և նոցա աղբիւրներին, նոյնպէս համաձայն է Ռափայէլին՝ իւր անթար արտասանութեամբ։ Նոյնպէս և Մ. Մ. Միանսարեանց, որ Տիփսիսի ծնունդ գորով՝ կամ պահել է իւր բնիկ առգանութիւնն, կամ չէ կամեցել սեպհականել Լազարեանց ճանարանի եղանակն, այլ հետեւել է՝ կամ իւր ի գրոց համոզմանց, կամ վերոյստուանեալ երկուց Պատկանեանց և Եղեանցի գրութեան։

Սորա չորեքին, և աշակերտք առաջնոց երից, և համայն զերգաստանք չորեցունց, ք, շ, ք տառերն հնչում են ըստ Տիփսիսեացոց, մինչ այս երկրք տառք՝ Արարատեան բարբառոց մէջն հնչում են այլազգ. ք, որպէս Լատին P, կամ Ph, ք, որպէս Լատին k, կամ c, ք՝ որպէս Լատին T, կամ th, որպէս և ի բարբառ Պոլսեացոց, իսկ ի Տիփսիս ք՝ հնչում է որպէս Լատին B. ք՝ որպէս Լատին g. իսկ ք՝ որպէս Լատին d. : Ի Պոլիս՝ որպէս ասացի ներհակ Տիփսիսեացոց, և համաձայն Արարատայ՝ Բենն հնչում է մերձ P կամ Ph. ձայնին, Գիմն՝ մեր k կամ c Լատին հնչման, իսկ Գա՝ մերձ Լատին t կամ th ձայնին։ Որոյ հակառակ է՝ ի Պոլիս ունի այն հնչումն, որ ինչ ի Տիփսիս ունի ք, համաձայն g տառին Լատինաց. ո՞ ի Պոլիս այն, ինչ ի Տիփսիս՝ ք, ըստ h տա-

ռի Լատինաց. s՝ ի Պոլիս այն՝ ինչ ք ի Տիփսիս հանգոյն d Լատինաց. ես յԱստրախան զարգացեալ՝ թէպէտ և ի մանկութենէ այնպէս եմ սովորել, ինչպէս Երևանցոց բարբառն է, և անփոփոխ պահել եմ, որպէս և հանգուցեալ Սըրբազան ներսէս Հայրապետն մինչ ի վախճան իւր պահեց անփոփոխ, սակայն երբ տեսայ՝ որ Պ. Եղեանցի աշակերտաց մէջ հասարակեալ է, և Գերովրէ Պատկանեանն և Մ. Մ. Միանսարեանց անսայթաք պահում են, և իմ որդոյ աշակերտաց մէջ ևս յետոյ հասարակեցաւ, և այժմ ևս մշտնջնաւորում է՝ Տիփսիսէն (Ռափայէլի միջնորդութեամբ) բերած հաւանական հնչիւնն, ինձ հաճոյ երեւց աւ, որովհետեւ այլազգական յատուկ անուանց հնչիւնն ըստ Լատին, Յոյն, Ասորի և Հրեայ յարմարագրութեանց մասնցոյց էին լինում, որ մեր թարգմանիչ Հարք՝ ոչ Հայոց լեզուն կրկամենային աղաւաղել, և ոչ այլազգական յատուկ անուանց հնչիւնն խանգարել, և այդ իսկ դիտաւորութեամբ՝ Յունաց քան և չորս տառից հանդէպ Հայոց լեզուի համար երեսուն և վեց տառ հնարեցին. եթէ արդարեւ ո՞ տառն պիտի համապատասխանէր Լատին h տառին, էր Babilon անունը չէին գրում Պապղլոն, այլ թարգմանել են Բաբելոն. ուրեմն նոցա զրչի տակն՝ և շրթանց մէկ մի օրինակ ք՝ արդարեւ հնչել է որպէս Լատին B, թէև այժմ նորա ազգակից Babel mandeb, գրում են Պապղլ մանտէլ։ Այսպէս և ք՝ հնչել է որպէս Լատին g, ք՝ որպէս Լատին d, ո՞ որպէս Լատին P, կ՝ որպէս Լատին k, ո՞ որպէս Լատին t։

Constantimopol պիտի գրէին Գոնստանթինոփոլ, և ոչ Աստանդնուպոլ, եթէ է տառն չունէր Լատին c տառի հնչիւնն, ո՞ չունէր է տառի ձայնն, և ո՞ տառն պիտի չհնչէր p տառի ձայնով։ Polis պիտի գրուէր Բօլիս, կամ Փօլիս, և ոչ Պօլիս։ Betlehem պիտի գրուէր Պետղէզէմ, և ոչ Բէթղէզէմ, բայց տեսնում ենք՝ որ մեր թարգմանիչք առաջ կանոն են դրել, և ապա թարգմանել, պահելով ճիշտ Յոյն և Լատին լեզուաց յարմարագրութիւնն. իսկ յետ ժամանակաց՝ չըզդիտեմ ինչ պատճառաւ սկսել են ուրեք ուրեք փոխել, և այս փոփոխութեան մէջ անստոյգն քան զստոյգն նախընտրել։

Իմ դիտաւորութիւնը այն չէ՛ որ ասեմ՝ թէ ինչ ինձ հաճոյ է և հաւանելի, այն թող լինի համազգային լեզուի կանոն։ Ա՛յ՛ Ա՛յլ կամիմ ասել, թէ անհնարին է՝ որ ազգի մէջ չգտնվի մէկ այնպիսի անձն՝ որոյ չհամարուի սեպուհ պարտաւորութիւն այս առարկայի վերայ խորհել, ի խորհուրդ հրաւիրել և անօրինել։ Ա՛յլ անձն՝ թէև ինքն ազգի Հայրապետն լինի, (և բաց ի նրմանէ ձի այլ պիտի ունենայ իրաւունք և փոյթ Ազգի համար՝ բարբառոյ թիրահանելու տաւերն ուղղելու որպէս և օտարազգի բառերն մերժեց լեզուէն և բարբառն մաքրեց), քաջայայտ է որ չի կամենար բացարձակ ասել՝ թէ այս՝ թող այսուհետև այսպէս լինի, և ո՛չ այնպէս, այլ նախ կըշարժէ իւր բարձր և բովանդակ ազգին լսելի և ակօրծելի բարբառովն այս խնդիրն, և կյառաջադէր ազգի ականաւոր գիտնականաց՝ այս մասին առաջ կանոնաւոր վիճարանութեան պայքար բանալ լրագրաց միջնորդութեամբ, և նուա՛ւ՝ դուռն գլխի տալով քննել, և ամենեցուն կամ հզօրադոյն մասին համաձայնութեամբ և հաճութեամբ՝ զբարի բարին ժողովելով յամանս, և զխօտանն ի բաց ընկնելով, գատակնքի, և այն վճիռն հրատարակել դարձեալ ի ձեռն լրագրաց, ապա այն արդէն հրատարակեալ և ամենեցուն ընդունելի եղեալ գատակնքն վաւերացուցանել Հայրապետական կոնդակաւ, որ դառնայ օրէնք յախտնական, և մեր յետնորդք ունենան փոքր ինչ յորպրոհալ ճանապարհ զարգացման։

Ես այս առարկայի վերայ խօսել եմ քանիցս հանգուցնալ Սրբազան Ներսէս Հայրապետի հետ դէմ առ դէմ, և նա միշտ համաձայն էր՝ որ այդ նիւթն դառնայ Ազգային Ժողովոյ քննութեան առարկայ, և վճիռ ստանայ ամենեցուն հաճութեամբ։ Բաց այժմ փոխանակ ժողովոյ կարէ արդենարար լրագիրդ Արարատ ժողովել ի բերանոյ Հայ վարժապետաց, վարդապետաց և ուսումնականաց՝ նոցա իւրաքանչիւրոց կարծիքն, և այն կարծիքն հետզհետէ հրատարակել անփոփոխ, և վճիռն՝ դարձեալ ի շրթանց ուսումնականաց և գիտնականաց սպասել և ստանալ, և ըստ այնմ մէկ անշարժ կանոն հաստատել, և այն կանոնն Հայրապետական կոնդակաւ նուիրագործել և սրբ-

լացուցանել, որպէս հանգուցեալ Ներսէս Սրբազան Հայրապետն վարեցաւ։ Հայոց թուականն նորոգելոյ ժամանակն, թէև նա ո՛չ ամենայն Հայոց ազգի հետ ունեցաւ խորհրդակցութիւն, որով և ազգասիրական լրագիրդ կյաջողէ լուծանել ո՛չ միայն իմ տարակոյսն, զոր գուցէ՛ թէ յառաջ քան զկղզնաւորութիւն գործոյս՝ ինձ հետ միասին կիջուցանեմ ի գերեզման, այլ և բազմաց տարակոյսն, որովհետև ան մէկ քանի տառից հընչմանց զանազանութիւնն է անում բազում անգամ զատողն խուժ և զտողն դուժ։

Ի վեր անդր ասացի՝ թէ ինձ հարկաւորութիւն հանդիպեցաւ՝ որ այս նիւթոյ վերայ դրաւոր մտածութիւն անեմ, և տարակոյսս հրատարակեմ։ Ծարակուսանացս մին այն էր՝ ինչ վերնասացի, իսկ միւսն այս է՝ որ այդ պիտի ասեմ, Հայոց մանկանց դաստիարակութեան վերայ շատ ազգասէր ուսումնականը ծիգն են դնում՝ իւրաքանչիւրն համաձայն իւր գաղափարի։ Այն ազգօգուտ գովելի աշխատութեանց մէջ փայլում է Մայրենի լեզու անուանեալ գրքոյն, ըստ առջին սպագրութեան, երկասիրութիւն Տէր Աւետիանց Պ. Նիկողոսյոսի, որ մեր ազգի մանկանց դաստիարակութեան սանդղոց առաջին ստորին ստորնաւն է, առանց որոյ վերայ ոտն դնելոյ՝ անհրա՛ւ է մանկութեան՝ ի վեր ելանել։ Ինձ այն գրքոյն տուեց ուսումնասէր և ազգասէր Մ. Մ. Միանսարեանցն, և ես ծայրէ ի ծայր մտազրուութեամբ նայեցայ և տեսի, որ այն ազգապիտան և գեղեցիկ գործն արժանի է դարձուցանել իւր վերայ մեր ուսումնականաց մտազրութիւնն, և հրաւիրել իւրաքանչիւրոց օժանդակութիւնն՝ որ այն մանկանց նախակրթական ձեռամբաճութիւնն կատարելագործվի՝ և լինի համապատշաճ նրպատակի և բարեմիտ հեղինակին՝ և այն ծնողաց՝ որք իւրեանց զաւակի ձեռն տալիս են այն Այրենարանն, որպէս ոսկիածոյլ բանալի՝ բացարան . . . զրանն Հայերէն զըլլութեան։ Քան թէ Հայերու տներն հեղեղուն զանազան անօգուտ Այրենարաններով, լաւ համարեցայ այն արդէն ժողովրդականութիւն ստացեալն լրացուցանել, որ նա զկնի երկրորդ սպագրութեան տեսէ և երրորդ և չորրորդ սպագ-

գրուածինն, և որքան հնար կայ՝ դիւրագին առնել:

Այսու դիտաւորութեամբ նորա մէջ խորամուխ մտայ, և նկատեցի՝ որ նորա մէջ կան այնպիսի կէտեր, որոց վերայ մեր ուսումնականաց բարոյական պարտքն է ուշադիր լինել, և այս դարձեալ էր գործածութիւն ոմանց տանից, որոց կանոնքն տակաւին են մեր առջևն որպէս պարտեզ փակեալ և աղբիւր կնքեալ: Թէ և որպէս Չամչեանի Քերականութիւնն, նոյնպէս և ամենայն քերականք ըստ քննց կանոնագիր են հանդիսացել, և փոխանակ ուղղելոյ՝ գուցէ թէ իսկ թիւրք են ևս անգամ: Եւ ի՞նչ պատճառաւ պիտի մեր ուսումնականք այս կէտի վերայ մտադիր ուշադրութիւն չդարձուցանեն. ի՞նչ է քան զայս առաւել մեր ուսումնականաց՝ զկնի աւուր պարենի՝ զբաղանքն և պարապմունքն, որ ուսումնական համախմբութեան մէջ տեղ ունենայէն զկնի՝ այսպիսի ազգագուտ գործոյն չօգնեն: Այս տառերն են՝ բայ ի վերոյիշեալ ֆ, ֆ, ր, ր, փ, ր, տառից, ծ, յ, ղ և է տառերն, որոց առաջնոյ վեցից հընչիւնն արարի վերագոյնդ քննութեան առարկայ, իսկ վերջին չորից համար լուցի՝ խոյս տալով յերկարամտութենէ, և այս չորից վերայ աւելցնելով «, յ, « տառերն, և նոցանէ ուրոյն ը, Վ, «, արժանի եմ համարում սոցա գործածութեան վերայ հրաւիրել՝ որոնել ուղիղ կանոնագրութիւն, որ ըստ ամենայնի փարատուի տարակոյսն:

Ես երբեմն երբեմն պարապում եմ գրականութեամբ, և իմ գրեւածներս չափազանց հակառակ չեն այս մեր կողմանց սովորութեան, ուր իմ հօրս և իմ սպասաւորութեամբ քան զկէս դարն երկարագոյն ժամանակաւ կեանք ունեցան Չամչեանի քերականութեան աւանդած կանոնքն: Բայց երբեմն ևս ինչ ինչ ուղարկում եմ Չմիւռնիոյ Արևելեան Մամուլն և Արշալոյսն Արարատեան, ուր քաջ գիտեմ՝ որ շատ բառեր այնպէս չեն արտասանուած, որպէս են՝ հին Քերականութեան կանոնաց երկարագուտ, և նորոց կարծեաց մէջ տակաւին չհամոզուածս, որովհետեւ ամօթ եմ համարում գետնաուիւծի նման ստեպ գոյնս փոխել՝ առանց ստոյգ հիմն գտանելոյ, բայց և ընդ նմին մնում եմ շուարուած, որովհետեւ զեւ չեմ իմա-

նում թէ ի՞նչպէս պիտի գրուին մեր այն հայերէն բառերն, որ Թուրքիոյ աշխարհի մերազգի բանիքուն գիտնականաց ծագրելի չլինին, զոր օրինակ՝ սպառնիւ կամ սպառ սպուռն՝ եթէ հարկ լինի տողի վերջումն կիսել, ըս-պառն՝ պիտի դրվի թէ սը-պառել, սպասն՝ ըս-պաս, թէ սը-պաս, զգեստն՝ ըզ-գե՛ստ, թէ զը-գեստ, զըօսանքն՝ ըզ-բօսանք, թէ զը-բօսանք, ստերիւրիլն՝ ըս-տերիւրել, կամ ըստ-երիւրել, թէ սը-տերիւրել, կամ սըտ-երիւրել, սպասաւորն՝ ըս-պասաւոր՝ թէ սը-պասաւոր, ստը-նանելն՝ ըս-տնանել, թէ սըտ-նանել, ստունգանիլն՝ ըստ-ունկանիլ, թէ սըտ-ունկանիլ, ստամբակն և ստահակն՝ ըստ-ամբակ, կամ ըստ-ամբակ, ըստ-տահակ, ըստ-ահակ, թէ սը-տամբակ, կամ սըտ-ամբակ և սըտ-ահակ, կամ սըտ-տահակ, սպունգ, սպանդ, ստոյգ, սխտոր, ստորոտ, ստորապրել, սըտապատիր, սկիզբն, սկուտիղ, սկիհ, սփածանիլ, շտեմարան, ստափիլ, շիթթ, շտապել և յն, որովհետեւ այսպիսի բառեր բազում են յոյժ:

Նոյնպէս «ֆ» ի՞նչ ձայն պիտի հանէ. Վճճ, թէ «օՎ» կամ թէ միայն «հնչէ, կամ «օ» միջարկութեան «կերպն» Վճճ պիտի հնչէ, թէ «Յովհաննէս բառի մէջ Վ տառն՝ ձայն պիտի հանէ, թէ «նչ» Թակոյք անուան մէջ անշուշտ պարտ է Վ տառի ձայնն պահել, թէ Թակոյք պիտի արտասանել: Ի՞նչ է պատճառն որ «տառն բառից մէջ երբեմն «տառի ձայն ունի, և երբեմն Վճճ վանկի իսկ բառից սկիզբն Վ է հնչում ըստ արևելիայց, այս ինքն՝ որդի բառն՝ վօրդի պիտի հնչէ, թէ որդի, ոսկին՝ վօսկի՞ պիտի ասուի՝ թէ օսկի, որդն՝ վճճդն, թէ օրդն, օրդունք, օրդնտեղ, որդան կարմիր՝ վօրդան, թէ օրդան կարմիր, որդուոյ, հոգուոյ, աղանջոյ և սոցա նման բառերի մէջ՝ « ի՞նչ գեր ունի. անշուշտ պիտի «տառի ձայնն լուռի» որպէս Վ, թէ պիտի կորչի, և միայն այն ցոյց տայ՝ առանց ձայնի՝ թէ չորրորդ հոլովման ներքոյ է. որդուոյ՝ որդիօ՞ պիտի հնչէ, թէ որդու, հոգիօ՞ պիտի լսվի թէ հոգու, և միայն հոգուոյ մէջ «գրած է, որ զանազանվի հոգ, հոգոյ բառէն: Եւ թէպէտ մինչև այսօր բերանէս համած չեմ օրդոյ կամ հոգու, « միշտ Վճճ եմ հնչել, և ոչ «, «ֆ» Վճճ և ոչ թէ «օ» «ֆ» Վճճ, և ոչ «օ» «ֆ» բայց խրդմամբս ինձ նեղում է, և յայտնի տեսնում եմ՝

որ « յարաբերականն կամ միջարկութիւնն կարօտ են բացատրութեան. » միջարկութիւնն թարգմանութիւն է օ կոչական միջարկութեան, « տէր, և իսկապէս դրած է օ կոչական նշանի տեղն, և անշուշտ օ տառի ձայն հանել տայոյ պատճառաւ և տառն աւելցրած է. իսկ մենք « Էր փոխանակ օ արտասանելոյ՝ կրկնմն օ՛վ են ասում, և կրկնմն օ՛վ. վերջին և տառն պահելով ի պատիւ կով բառին հնչման. և չդիտեմ՝ թէ այս որ դարու պատշն է, մինչ տեսնում եմ՝ որ շարականի մեջ քանի տեղ Յովհաննէսն՝ Յոհաննէս է. իսկ Յակովբն՝ Յակոբ: Եօթն խոտաճարակաց շարականի տան զուխններն՝ Յոհաննէս են լաղ յօղում, Յոհաննէս: Որ է ոչոտայ: Հասարակ: Վ չկայ: Յակովբայ Մծբնայ Հայրապետի շարականն օրհնութեան՝ Յակոբ է, Յոհաննէս է ոտայ: Ատարակ: Կարող էր: Նոյնպէս և հանդատեան. Յոհաննէսն է յոյ: Անտիպա: Կարող էր: Որ է տան մեր: Բարեբանէմ, և լն:

Օ տառն՝ երբ և մտած լինի անգամ, յայտնի է որ ներսէս Շնորհալին մեր օ տառով զործածած օրհնէմն՝ ուրհնէմ է գրել և « տառի տեղ է գրել և ոչ օ տառի: Օրհնէմն շէն կրկն ճաշու ժամու, որ պարբերնի կարգաւ է գրած, եթէ կամենար՝ կարող էր այլ բառ դնել, և այբով սկսել. բայց ուրհնէմն է նախընտիր կարգել, ուրեմն նորա ժամանակն օրհնել, օրհնութեան, և այլ պայտի բառեր, Պօղ, Պօղոս, զրկում էին և արտասանվում էին ուրհնել, ուրհնութեան, Պատարակ, կամ Պատարակ: Անտառի շարականն՝ որ նոյնպէս «, ք, ք, նորա սիրելի կարգն ունի, սկսուած է ուրհնել, քովէմ, քարեբանէմ: Գուցէ թէ և միւս զօրհններն (կուսկէտներն) եղել են այբուբենի կարգաւ, և այժմ մեզ համար կորած են, որովհետեւ կրօնաւորաց այսբան ևս բաւ է, ի՞նչ պիտոյ է շտայութիւն. Նոյն վերոգրեալ խոտաճարակաց շարականի Յոհաննէսի տան զուխ այբի տեղ դրած է ուրհնել մերոյ հայրապետի, որոյ փոխարէն օ՛վ էր դնելով՝ եղել է ուրհնել: Հանգամանքն ջոյց են տալիս որ հեղինակն ուրհնել է գրել, և այլ տառի տեղ է գրել, և կամեցել է որ Յոհաննէս կարդացուի, քան թէ Յոհաննէս Ձեմ զարմանում թէ աւրհ-

նութիւնն՝ օրհնութիւն է դառել, և աւծումն օ՛ծումն, երբ ահագին Աւրելիանոսն՝ Օրեղիանոս է փոխուել, և Աւրելիոն քաղաքի անունն՝ Գաղղիացիք Օրլէան են շինել. բայց աններելի եմ համարում՝ որ մեր Սրբազան Հայրապետի անունն Գէորգ՝ չգիտնեք թէ ուղիղ ի՞նչպէս պիտի արտասանենք՝ Գէօրգ, թէ Գէորգ, երբ ուղիղ գրում ենք Գէորգ, պէտք է յառաջ քան զտառն « մը տացածին և կամ « ևս յաւելուլ, ինչպէս հարկաւոր, կամ հոգևոր, կամ լուսաւորիչ բառերի մեջ: Այսորիկ աղագաւ « տառն մեծ աշխատութիւն է պահանջում, որ հնար լինի հաստատ իմանալ թէ ո՛ւր պիտի ձայն հանէ, և ո՛ւր մնայ անձայն:

Ես թէպէտ քննելի տառից անուններն ի վեր անդր նշանակեցի, բայց միայն ոմանց համար խօսեցայ, և մնացից համար չյօժարեցայ առարկել անգամ, որովհետեւ առանց նոցա ևս յերկարից բանասիրականս, և ի հաճութիւն լրագրիդ թողում զհրատարակութիւնն, որ մեր ազգի աշխատասէր ուսումնականք՝ որք միանգամ արժանի համարին այս իմ առաջարկութիւնն՝ իւրեանց պատասխանեոյն, իւրեանց կարծիքն մարմնացուցանեն բացայայտութեամբ, որ զլինու քննեալ և կոտորակեալ կանոնի զօրութիւն, և մեզ տարակուսելի երեւեալ ինդրոյ առարկայն՝ չմնայ և մեր յետնորդաց համար տարակուսական:

ԵՆԲՈՒՆԻ ԳԱՐԻԷԼ ԳԱՏԿԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Վ.Ե.Ը. ՀԱՅԲԱՊԵՏ.

Մենայն Հայոց Վեհափառ Հայրապետ յառաջիկայ Զոհնիս ամսոյ սկիզբներում պիտի երթայ ի Բիւրական յամուանոցն: